





ՏԵՂԵԿԱԼՔ

2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-փետրվար)


Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %




■ Այլ ծառայություններ (ընթացիկ գներով, մլն դրամ)
 ■ Առևտրի շրջանառություն (ընթացիկ գներով, մլն դրամ)



■ Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով, մլն դրամ)
 ■ Արդյունաբերական արտադրանք (ընթացիկ գներով, մլն դրամ)



Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի համեմատ (աճողական) կազմել է՝ 106.5%, 2018թ. հունվար-փետրվարին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 110.1%, 2017թ. հունվար-փետրվարին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.6%:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարի կազմել է 25,116.1 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 3,473.1 և 7,981.6 մլն. դրամով, իսկ արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 262,893.4 մլն.դրամ, ինչը 8,189.5 մլն. դրամով ավել է 2018 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ և 34,459.1 մլն դրամով ավել է 2017թ.

հունվար-փետրվարի համեմատությամբ: Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 412,050.1 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 52,987.8 և 119,850.7 մլն. դրամով: Իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 268,441.0 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 42,754.8 և 74,246.6 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 101.9%, 2018 և 2017թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների համեմատվող նույն ժամանակաշրջանների 116.1%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 121.6%, 2018 և 2017 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 122.7%-ի, 2017 և 2016 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 86.2%-ի պարագայում:

* Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշը բացակայում է, քանի որ 2019թ. դրա ամփոփումը կատարվելու է եռամսյակային կտրվածքով




ՏԵՂԵԿԱԼԸ


2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-փետրվար)

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)

- Այլ ծառայություններ
- Առևտրի շրջանառություն




- Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Մշակող արդյունաբերություն (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում (ընթացիկ գներով, մլն դրամ)




Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)

- Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում
- Մշակող արդյունաբերություն
- Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
- Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում



- Ֆինանսական և ապահովագրական գործունեություն (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Տեղեկատվություն և կապ (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Մշակույթ, զվարճություններ և հանգիստ (ընթացիկ գներով, մլն դրամ)



Առևտրի շրջանառության իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 113.1%, 2018 և 2017 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 117.4%-ի, 2017 և 2016 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.6%-ի պարագայում:

Այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 117.5%, 2018 և 2017 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 115.1%-ի, 2017 և 2016 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 111.1%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 45,236.5 մլն.դրամ, ինչը 8,377.7 մլն. դրամով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ և 1,747.1 մլն դրամով պակաս է 2017թ. հունվար-փետրվարի համեմատությամբ:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 169,545.2 մլն.դրամ, ինչը 22,526.0 մլն. դրամով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ և 47,002.4 մլն դրամով ավել է 2017թ. հունվար-փետրվարի համեմատությամբ:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 44,097.1 մլն.դրամ, ինչը 5,965.7 մլն. դրամով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ և 10,963.6 մլն դրամով պակաս է 2017թ. հունվար-փետրվարի համեմատությամբ:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 4,014.6 մլն.դրամ, ինչը 7.3 մլն. դրամով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ և 167.4 մլն դրամով ավել է 2017թ. հունվար-փետրվարի համեմատությամբ:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 92.7%, 2018 և 2017 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 98.0%-ի, 2017 և 2016 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.0%-ի պարագայում:


Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 108.0%, 2018 և 2017 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 118.4%-ի, 2017 և 2016 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 123.3%-ի պարագայում:




ՏԵՂԵԿԱԼԸ

2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-փետրվար)


Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Չուտ միջազգային պահուստներ (ՉՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ



Վշխատանք փնտրողներ, ընդամենը ժամանակաշրջանի վերջին ամսվա դրությամբ, մարդ

Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը, ընդամենը ժամանակաշրջանի վերջին ամսվա դրությամբ, մարդ



Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մատով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 93.0%, 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 94.9%-ի, 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.0%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մատով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 98.7%, 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.7%-ի, 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.3%-ի պարագայում:

Մշակույթ, գվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 67,812.7 մլն. դրամ, ինչը 2018 և 2017 թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 20,824.9 և 26,454.5 մլն. դրամով, իսկ տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 38,487.0 մլն. դրամ, ինչը 2018 և 2017 թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1,913.5 և 4,694.9 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 63569.9 մլն. դրամ, ինչը 2018 և 2017 թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 11,866.2 և 20,156.2 մլն. դրամով:

Մշակույթ, գվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 141.6%, 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 113.7%-ի, 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 115.7%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 105.2%, 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.6%-ի, 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.1%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 121.4%, 2018 և 2017 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 119.1%-ի, 2017 և 2016 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 115.1%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 101.3%, 2018թ. հունվար-փետրվարին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 103.1%, 2017թ. հունվար-փետրվարին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 99.6%:

Չուտ միջազգային պահուստները (ՉՄՊ) 2019թ. փետրվարի վերջի դրությամբ կազմել է 684,789.0 մլն դրամ, ինչը 42,325.0 մլն. դրամով կամ 6.6%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 90,307.0 մլն. դրամով կամ 15.2%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Վշխատանք փնտրողների թիվը 2019թ. փետրվարի դրությամբ կազմել է 82426 մարդ, ինչը 2113 մարդով կամ 2.5%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 13744 մարդով կամ 14.3%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:




ՏԵՂԵԿԱԼՔ


2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-փետրվար)

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)

Արտաքին առևտրաշրջանառության ծավալը
Առևտրի հաշվեկշիռը



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)

Արտահանում (ՖՕԲ գներով) Ներմուծում (ՄԻՖ գներով)



ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անուճով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկրի հրականացված փոխանցումներ (հազար ԱՄՆ դոլար)

Ներհոսք Արտահոսք Չուտ ներհոսք



Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2019թ. փետրվար դրությամբ կազմել է 64861 մարդ, ինչը 4615 մարդով կամ 6.6%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 15902 մարդով կամ 19.7%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 1,011.9 մլն. դոլար, ինչը 84.1 մլն. դոլարով կամ 7.7%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 244.9 մլն. դոլարով կամ 31.9%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2019թ. հունվար-փետրվարին կազմել է -336.13 մլն. դոլար, ինչը 4.9 մլն. դոլարով կամ 1.5%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 118 մլն. դոլարով կամ 54.1%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 337.9 մլն դոլար, ինչը 44.5 մլն. դոլարով կամ 11.7%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 63.4 մլն. դոլարով կամ 23.1%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՄԻՖ գներով) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 674 մլն դոլար, ինչը 39.6 մլն. դոլարով կամ 5.6%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 181.5 մլն. դոլարով կամ 36.8%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2019թ. հունվար-փետրվարին կազմել է 172445 դրամ, ինչը 5774 դրամով կամ 3.5%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 9185 դրամով կամ 5.1%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2019թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անուճով արտերկրից ստացվել է 259,329.44 հազար դոլար, ինչը 38,130.42 հազար դոլարով կամ 17.2%-ով ավել է 2018թ. և 73,856.16 հազար դոլարով կամ 39.8%-ով ավել է 2017թ.

համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2019թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անուճով արտերկրի է փոխանցվել 194,538.44 հազար դոլար, ինչը 21,012.17 հազար դոլարով կամ 12.1%-ով ավել է 2018թ. և 85,538.84 հազար դոլարով կամ 78.5%-ով ավել է 2017թ.

համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2019թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անուճով արտերկրից ստացված և արտերկրի փոխանցված դրամական միջոցների գուտ ներհոսքը կազմել է 64,791.01 հազար դոլար, ինչը 17,118.26 հազար դոլարով կամ 35.9%-ով ավել է 2018թ. և 11,682.67 հազար դոլարով կամ 15.3%-ով պակաս է 2017թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:




ՏԵՂԵԿԱԼՔ

2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-փետրվար)


ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկրի իրականացված փոխանցումներ (մլն ՀՀ դրամ)

Լերիոսք Արտահոսք Չուտ ներհոսք



Պետական բյուջեի պակասուրդի/հավելուրդի ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրները, ընթացիչ գներով, մլն դրամ

Ֆինանսավորման ներքին աղբյուրներ
Ֆինանսավորման արտաքին աղբյուրներ



2019թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 126,342.74 մլն. դրամ, ինչը 19,751.06 մլն. դրամով կամ 18.5%-ով ավել է 2018թ. և 36,144.31 մլն. դրամով կամ 40.1%-ով ավել է 2017թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

2019թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից և փոխանցվել 94,763.61 մլն. դրամ, ինչը 11,159.73 մլն. դրամով կամ 13.3%-ով ավել է 2018թ. և 41,754.44 մլն. դրամով կամ 78.8%-ով ավել է 2017թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2019թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկրի փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 31,579.13 մլն. դրամ, ինչը 8,591.33 մլն. դրամով կամ 37.4%-ով ավել է 2018թ. և 5,610.13 մլն. դրամով կամ 15.1%-ով պակաս է 2017թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

2019թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է (18,586.3) մլն. դրամ, այն դեպքում, երբ 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջաններում ՀՀ պետական բյուջեի հավելուրդի ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 20,904.3 մլն. դրամ և 8,026.0 մլն. դրամ: 2019թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է (21,968.0) մլն. դրամ 2018թ. և 2017թ. համապատասխանաբար (16,878.2) մլն. դրամ և (8,642.9) մլն. դրամ ցուցանիշների դիմաց: